

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՐԾՐՈՒՆԻ ԷԴՎԱՐԴԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԼՈՒԿԱՇԻ ԱԹՈՅԱՆ

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՄԻՔԱՅԵԼ ՍԵՐԳԵՅԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԷԼՔԻՍ ԲԱՐՍԵՂԻ ՊԵՊԼՈՉՅԱՆ

Առաջատար
կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 14:00-ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի հուլիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտ.քարտուղար



(ստորագրություն)

Տ. Ս. ՄԱՐՏԻՐՈՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների գործարար ակտիվության բարձրացման, տարածաշրջանային ներդրումային գրավչության ապահովման հիմքում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնախնդիրների բացահայտումն է և լուծման ուղիների առաջադրումը: Թեմայի արդիականությունը պահանջում է հետազոտական աշխատանքի արդյունքներով մշակել ուսումնասիրվող համակարգերի զարգացման հիմնախնդիրների լուծման տեսական դրույթներ և կատարելագործման մեթոդական հիմք, որում էլ դրսևորվում է ատենախոսության հիմնական գիտական նորույթը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, դրա գնահատման գործընթացի՝ տասնամյակներ շարունակ վիճահարույց մնալու հանգամանքով: Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության վերաբերյալ կատարված հետազոտությունը կոչված էր ապացուցելու, որ գործող համակարգերը չունեն արդյունավետության գնահատման ենթահամակարգ, ինչն էլ մեր կողմից կառուցակարգվել և ներկայացվել է աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում: Ենթակառուցվածքների արդյունավետությունը ստուգելու նպատակով մեր կողմից կիրառվել է Արդյունավետության հիմնական ցուցանիշը /այսուհետ՝ KPI / Key Performance Indicator/:

Արդյունքում միջազգային չափումների համատեքստում մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), որի միջոցով գնահատել ենք Հայաստանի դիրքը՝ որպես ելակետային տվյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index/Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի ներկա վիճակի ուսումնասիրությունն է, առկա հիմնախնդիրների բացահայտումը, միջազգային փորձի ուսումնասիրման հիմքով այնպիսի ինդեքսի մշակումը, որով կգնահատվի ինչպես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության ընդհանրական մակարդակը, այնպես էլ արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության մակարդակը, արդյունքում կմշակվեն գիտագործնական առաջարկներ, որոնք կնպաստեն ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացմանը՝ ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող հանգամանքների վերացման միջոցով:

Այդ նպատակի իրացմանը հետամուտ լինելով ատենախոսությունում փորձ է արվել՝

- հետազոտել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը և ներկայացնել դրա հիմնական բաղադրիչները,
- ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները,

- ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման միջազգային փորձը,
- վերլուծել ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակը և առանձնահատկությունները,
- վերլուծել արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների արդի վիճակը ՀՀ-ում,
- հետազոտելով միջազգային պրակտիկայում առկա ինդեքսները՝ մշակել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման AIP ինդեքսը,
- անցկացնել հարցում՝ պարզելու համար ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները,
- առաջադրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքները, իսկ հետազոտության առարկան է ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Հետազոտության արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ, հատկապես կարևորվում են հետևյալները.

- Միջազգային փորձին համահունչ մշակվել և տեղայնացվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի և արդյունավետության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), ինչը հնարավորություն կտա գնահատել ինչպես ընդհանուր, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության մակարդակը և արդյունավետությունը:

- Մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման միջոցառումների համալիր, որն ուղղված է ֆինանսական ռեսուրսների հասանելիության, օրենսդրական կարգավորման, հարկային, մաքսային և դատախիզական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության մեջ ներկայացված գիտական արդյունքներն ինքնուրույն հետազոտության արդյունք են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման հարցում և միտված են սկզբունքորեն նոր մոտեցումներով նպաստելու ձեռնարկատիրական ենթակառուցվածքների միջավայրի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական և գիտամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերյալ հայրենական և միջազգային ուսումնասիրությունները, հիմնախնդրի վերաբերյալ հրատարակված գիտական աշխատանքները, ՀՀ տարբեր նախարարությունների կողմից ընդունված թեմային առնչվող կանոնակարգերը և

նորմատիվ բնույթի գերատեսչական ակտերը, ինչպես նաև ոլորտը կարգավորող որոշումները՝ կապված սույն հիմնախնդրի հետ:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները (այսուհետ՝ նաև ՀՀ ՎԿ), ՀՀ գյուղատնտեսության, ենթակառուցվածքների և տարածքային կառավարման, ֆինանսների և այլ նախարարությունների տեղեկատվական նյութերը և հաշվետվությունները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական արևմտաեվրոպացի, համեմատական և համակարգային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, վերլուծության և համադրության, պոզիտիվային և նորմատիվային, տնտեսավիճակագրական ռեգրեսիոն և կոռելյացիոն մեթոդները:

Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը հանդիսանում է երկրի տնտեսության և ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության կազմակերպմանը նվիրված ուսումնասիրություն, որի գործնական նշանակությունը պայմանավորված է այդ համակարգերի զարգացման և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ, իսկ տեսական առումով մի փորձ է՝ առաջադրված հարցադրումների, վերլուծությունների և հիմնավորումների միջոցով նպաստել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության առավելությունների բացահայտմանը, դրա տեսության ու պրակտիկայի զարգացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել մասնավորապես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության զարգացմամբ հետաքրքրված պետական և մասնավոր կառույցների, ինչպես նաև այդ հիմնախնդրով զբաղվող մասնագետների կողմից ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության զարգացման ռազմավարության և աջակցման ենթահամակարգերի մշակման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել տնտեսագետ-տեսաբանների հետ: Հետազոտության մեջ քննարկված կարևորագույն դրույթները, հարցերն ու հիմնադրույթները իրենց լուսաբանումն են ստացել հեղինակի թվով 11 հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, թվով 17 հավելվածներից: Այն շարադրված է 120 համակարգչային էջերի վրա՝ ներառյալ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, պարունակում է 20 աղյուսակ, 20 գծապատկեր:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորված են ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին «ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը, դրա գնահատման և վերլուծության տեսամեթոդաբանական մոտեցումները» վերտառությամբ գլխում բացահայտված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը և ներկայացված են դրա հիմնական բաղադրիչները, ուսումնասիրված են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

Ուսումնասիրությունների շրջանակներում առանձնակի ուսումնասիրության կարիք ունի ձեռնարկատիրական ենթակառուցվածք հասկացությունը: Ջոշիմսենը ձեռնարկատիրական ենթակառուցվածքը բնորոշում է որպես «կազմակերպիչական ձևերի ամբողջություն, որոնք ապահովում են գործարար հարաբերությունների գործառնումը և այդ տարաբնույթ և տարասուբյեկտ հարաբերությունն ընդհանրացնում են մեկ ամբողջության մեջ՝ ծառայեցնելով պետության զարգացմանը»¹: Մ.Վ.Սավչենկոն ձեռնարկատիրական գործունեությունը սահմանում է որպես առանձնահատուկ ենթակառուցվածքային համալիր, որը սպասարկում է ձեռնարկատիրության գործառույթների հիմնական բաղադրիչները՝ արտադրության գործոններ, ձեռնարկատիրական մենեջմենթ, ձեռնարկատերերի անհատական շահերի իրացում², որով հեղինակը ձեռնարկատիրական ենթակառուցվածքը դիտարկում է որպես միկրոհամակարգ:

Ինչպես վերը բերված մեկնաբանություններից պարզ դարձավ, հեղինակների մեծ մասը (օրինակ, Դ.Հեգբերը, Ս.Բոսնյակը) ձեռնարկատիրական ենթակառուցվածքը կապում են տնտեսության ֆիզիկական կողմի հետ: Միևնույն ժամանակ Բրենեսը և Հասարը իրենց աշխատության մեջ ընդգծել են, որ ձեռնարկատիրության գործառնմանը նպաստում են նաև ֆիզիկական սուբստանցիայից զուրկ ենթակառուցվածքները³: Մենք ևս հարում ենք այս մոտեցմանը և ասվածը հիմնավորելու համար ներկայացնում ենք ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքների դասակարգումը:

Անցում կատարելով «ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածություն» հասկացության ուսումնասիրությանը՝ նշենք, որ այն ինքնին բազմաբովանդակ է և տնտեսագիտական գրականության մեջ վերջինիս սահմանման և էության մեկնաբանման վերաբերյալ առկա է բազմակարծություն: Նախ և առաջ այն կարելի է սահմանել որպես արտադրական և ոչ արտադրական ոլորտների մեկ ամբողջական համակարգ, որը շուկայական միասնական տարածության մեջ կապող օղակ է հանդիսանում ապրանք վաճառողի (ծառայություն

¹ Jochimsen, R., Ed. Theorie der Infrastruktur: Grundlagen der marktwirtschaftlichen Entwicklung. Tübingen, J.C.B. Mohr. – 1966., p. 58.

² Савченко М. В. Инфраструктурное обеспечение современного предпринимательства (проблемы теории и практики) дисс... канд. экон. наук. Москва, 2000. С. 55.

³ Brenes E., and Haar J., Pp.29.

մատուցողի, աշխատանք կատարողի) և այն օգտագործողի միջև՝ միաժամանակ վերացնելով կամ նվազեցնելով արտադրության և սպառման ծավալների միջև առաջացող հակասությունները, այդպիսով՝ շուկայի բոլոր մասնակիցներին հնարավորություն ընձեռելով առավելագույնս ապահովելու իրենց առջև դրված նպատակները:

Մեր կարծիքով, տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը մեծամասամբ կախված է ինչպես առանձին շուկաների ենթակառուցվածքների, այնպես էլ դրա այնպիսի տեսակների զարգացման մակարդակից, որոնք վերարտադրության համար ապահովում են համապատասխան անհրաժեշտ պայմաններ, ինչն էլ հիմք ընդունելով առանձնացրել ենք դրանց վերաբերող արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքները:

Մեր ուսումնասիրության շրջանակներում որպես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության չափման ինդիկատորներ կօգտագործենք ֆինանսական ռեսուրսների հասանելիություն, օրենսդրական կարգավորում, հարկային համակարգ, մաքսային համակարգ, դատաիրավական համակարգ ինդիկատորները:

Մեր աշխատանքում ուսումնասիրել ենք հետևյալ համաշխարհային ինդեքսները՝ GEI (Global Entrepreneurship Index/Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս), «Համաշխարհային տնտեսական ֆորումի» (The World Economic Forum, այսուհետ WEF) տնտեսական ազատության զեկույցներում ներառված 4 ինդեքսները, WEF-ի մրցունակության զեկույցում ներառված ենթակառուցվածքային ինդեքսները, Համաշխարհային բանկի Doing Business զեկույցի համաթիվը և այլն:

Ամփոփելով նշենք, որ, մեր կարծիքով, ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածությունը ձեռնարկատիրության ենթակառուցվածքի սուբյեկտների կողմից ենթակառուցվածքային գործիքների կիրառմամբ և ենթակառուցվածքային գործունեության տեսակների կազմակերպմամբ ենթակառուցվածքային համակարգի զարգացման գործընթաց է: Ամփոփելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք արձանագրել, որ վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանն, ըստ համաշխարհային չափումների, գտնվում է միջանկյալ դիրքում, պարբերաբար արձանագրելով առաջընթացներ և հետընթացներ՝ ըստ տարբեր չափորոշիչների:

Ատենախոսության երկրորդ «ՀՀ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության արդի վիճակի վերլուծությունը և արդյունավետության գնահատումը» վերտառությամբ գլխում ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի արդի վիճակի վերլուծությունները, դրանց արդյունավետության գնահատումներն՝ ըստ վերը բերված դասակարգման:

Արտադրական ենթակառուցվածքի զարգացման նպատակով ծրագրված քայլերի արդյունավետությունը մեծապես կախված է դրանք իրականացնելու համար բավարար պայմաններից, որպիսիք հնարավոր է բացահայտել համապատասխան վերլուծությունների արդյունքում:


Հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ արտադրական ենթակառուցվածքից ընտրել ենք արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտները:

Աղյուսակ 1. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, 2002-2019թթ. (մլրդ. դրամ)⁴

Տնտեսության հիմնական ճյուղեր	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արդյունաբերություն	341	426	535	652	645	717	739	669	824
Գյուղատնտեսություն	335	338	339	493	556	634	628	552	636
Շինարարություն	167	238	276	435	644	671	858	579	588
Ծառայություններ	195	217	235	363	499	599	698	698	771
Առևտուր	784	927	1085	1072	1086	1422	1676	1573	1810

Աղյուսակ 1.-ի շարունակություն

Տնտեսության հիմնական ճյուղեր	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Արդյունաբերություն	998	1121	1242	1291	1342	1432	1660	1937	2104
Գյուղատնտեսություն	795	841	919	982	945	878	908	893	853
Շինարարություն	504	479	453	463	481	410	415	436	451
Ծառայություններ	840	941	988	1090	1147	1268	1453	1726	1993
Առևտուր	2049	2195	2328	2406	2277	2234	2602	2933	3249



Գծապատկեր 2. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, 2002-2019թթ. հիստոգրամմա

Այսպիսով արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման հիմքով վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող

⁴ Աղբյուրը՝ Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման վերաբերյալ վիճակագրական տեղեկագրեր, 2003-2020թթ.

տարիների ընթացքում արդյունաբերական ենթակառուցվածքը և դրա առանձին ոլորտները աչքի են ընկել ոչ կտրուկ փոփոխություններով: ՀՀ արդյունաբերության առանցքային ոլորտում շարունակել է մնալ մշակող արդյունաբերությունը, որի մասնաբաժինը արդյունաբերական արտադրանքի ծավալի մեջ 2019 թվականին կազմել է 63,7%: Համեմատության համար, հանքարդյունաբերության մասնաբաժինը, (որը հանդիսանում է երկրորդը իր արտադրանքի ծավալով), նույն թվականին կազմել է 18,2%:

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակը 2010-2019 թվականների ընթացքում աճել է 153,3%-ով, ինչը ցույց է տալիս, որ ոլորտը դեռ աճում է: Մասնավորապես հատկանշական է էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման կազմակերպությունների քանակի աճը, որը կազմել է 47,6%:

Յուրաքանչյուր ենթակառուցվածքի գնահատման դեպքում կարիք ենք համարում նաև կատարել ռեգրեսիոն վերլուծություն՝ պարզելու համար, թե ինչպիսի փոփոխություն է կրում ամբողջ ճյուղը՝ վերջինիս մեկ ենթաճյուղի դինամիկ փոփոխության դեպքում: Վերջնական նպատակն է պարզել ճյուղի ենթաճյուղի 1% աճի ազդեցությունն ընդհանուր ճյուղի վրա:

Այժմ ուսումնասիրենք, թե ինչպիսի կապ է գործում ուսումնասիրված ոլորտների միջև 2002-2019թթ-ի ընթացքում:

Աղյուսակ 3. Հանքագործական արդյունաբերության ենթաճյուղի ազդեցությունը ամբողջ արդյունաբերության վրա

ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ռեգրեսիոն վիճակագրություն

Բազմակի R	0.990825
R-քառակուսի	0.981735
Ճշգրտված R-քառակուսի	0.919235
Ստանդարտ սխալ	133.3531
Դիտարկումներ	17

Շեղումների վերլուծություն

	df	SS	MS	F	F արժեք
Ռեգրեսիա	1	15293035	15293035	859.9788	1.16E-14
Մնացորդ	16	284528.6	17783.04		
Ընդամենը	17	15577564			

Y-հարկումներ	Գործակից	Սկրանդարդ սխալ	t-վիճակագրություն	P-արժեք	սպորիին 95%	վերին	սպորիին	վերին
						ն 95%	95%	95%
16	5.663301	0.193119	29.3254	2.45E-15	5.253906	2695	5.25390	6.0726

Արդյունքի մնացորդ




դիրարկում	կանխադրելի 300	մնացորդ	սքրանդարդ մնացորդ
1	113.266	195.734	1.512961
2	175.5623	165.4377	1.27878
3	266.1751	159.8249	1.235395
4	549.3402	-14.3402	-0.11084
5	639.953	12.04703	0.09312
6	645.6163	-0.61627	-0.00476

Հավանականության արդյունք

տրկու	300
2.941176	309
8.823529	341
14.70588	426
20.5882	535
26.4705	645
32.3529	652

7	645.6163	71.38373	0.551773
8	594.6466	191.3534	1.479101
9	526.687	160.313	1.239168
10	826.8419	8.15811	0.06306
11	928.7813	24.2187	0.187203
12	1110.007	16.99308	0.131351
13	1200.62	3.380269	0.026128
14	1093.017	191.983	1.483967
15	1642.357	-290.357	-2.24437
16	1455.468	-22.4683	-0.17367
17	1665.01	-54.0104	-0.41748

38.2352		
9	687	
44.11765	717	
50	786	
55.8823		
5	835	
61.76471	953	
67.6470		
6	1127	
73.5294		
1	1204	
79.41176	1285	
85.2941		
2	1352	
91.17647	1433	
97.0588		
2	1611	



Կոռելյացիոն կախվածության ուսումնասիրման արդյունքում պարզել ենք դետերմինացիայի գործակցի արժեքը՝ R^2 , որը հավասար է 0.98-ի, սա ունի տնտեսագիտական մեկնաբանություն. ողջ արդյունաբերության շեշտակի աճը կարող է արդյունք լինել հանքագործական արդյունաբերության 1% դրական փոփոխության: Հիմք ընդունելով կապի սերտության գնահատման քանակական հատկանիշները՝ նշենք, որ այս ցուցանիշը համապատասխանում է սերտության 4-րդ մակարդակին՝ ձգտում է մեկի, հետևաբար ուսումնասիրվող գործակիցների միջև կապը ուժեղ է:

Այժմ որոշենք արտադրական ենթակառուցվածքի արդյունավետությունը

Աղյուսակ 4. Արտադրական ենթակառուցվածքի արդյունավետությունը

Ելակետային տվյալներ	Փաստացի	Բազային	Նորմա	Արդյունավետության գործակից
Արդյունաբերությունը	1611.2	1432.7	1096.5	53,1
Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ տնտեսությունների	908.1	878.5	808.7	42,4
Անասնաբուծական հիմնական մթերքի արտադրությունը	439.3	391.8	328.7	75,3
Բուսաբուծության արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը	468.8	486.7	479.9	263,2
Շինարարության ծավալը	429,9	410,6	525,1	16,9
Բեռնաշրջանառությունը, մլն տոննա-կմ	4256.3	3881.2	3680.5	186,9
Ուղևորաշրջանառությունը, մլն ուղևոր-կմ	2665.5	2597.7	3247.0	10,4

Արտադրական ենթակառուցվածքի արդյունավետության գնահատման արդյունքում պարզեցինք, որ ենթակառուցվածքում ներառված առանձին տարրերն ընդհանուր առմամբ արդյունավետ են գործառնել: Մյուսների նկատմամբ նվազ արդյունավետություն են ունեցել տրանսպորտի և շինարարության ենթակառուցվածքները, ինչը, ինչպես պարզ դարձավ արդեն իսկ կատարված ուսումնասիրությամբ, հետևանք է այն բանի, որ այդ ենթակառուցվածքները ՀՀ տնտեսության համար նվազ աճ են ապահովում:

Ոչ արտադրական ենթակառուցվածքների ընտրության հիմքում ևս ՀՀ վճարված կապիտալի և, ինչպես ցույց տվեցինք նախորդ ենթահարցում, ՀՀ վճարված կապիտալի մասնաշրջանառությունների ոլորտը առաջնակարգ դեր ունի և ներառում է սոցիալական, ինստիտուցիոնալ և տեղեկատվական ծառայությունների ոլորտները:

Կատարենք ոչ արտադրական ենթակառուցվածքների արդյունավետության գնահատում և վերլուծություն:

Աղյուսակ 5. Ոչ արտադրական ենթակառուցվածքների արդյունավետության գնահատում

Ելակետային տվյալներ	Փաստացի	Բազային	Նորմա	Արդյունավետության գործակից
SS	11,067	8,317	6,431	145,8
Զբոսաշրջություն	1,4	1,2	0,9	66,7
Բանկային ոլորտ	3,4	3,5	3,2	33,3

Ոչ արտադրական ենթակառուցվածքներից էական արդյունավետություն գրանցվել է SS ոլորտի զծով և դա սպասելի էր, քանի որ SS ոլորտը, ինչպես արդեն ուսումնասիրությամբ ցույց տրվեց, վերջին տարիներին ՀՀ ոչ արտադրական ենթակառուցվածքների թվում առավել դինամիկ զարգացող ոլորտն է:

Պարզելու համար, թե ըստ տնտեսվարող սուբյեկտների ինչ խոչընդոտներ են առկա ՀՀ-ում, որոնք խաթարում են ձեռնարկատիրական գործունեության բնականոն զարգացմանը, անցկացրել ենք հարցում, որոնց հիմքում դրել ենք ատենախոսության առաջին գլխում ներկայացված ինդիկատորները: Հարցումներին մասնակցել են 644 ընկերություն⁵: Հետազոտվել են 10% «միկրո» չափի ընկերություններ, որոնք ունեն 1-9

⁵Հավաստիության մակարդակն ըստ <https://www.surveymonkey.com/mp/sample-size/>:

աշխատակից, 30% «փոքր» չափի ընկերություններ, որոնք ունեն 10-49 աշխատակից, և 60% «միջին» չափի ընկերություններ, որոնք ունեն 50-250 աշխատակից: Ապահովված է եղել նաև ոլորտների ներկայացվածությունը, ընտրանքը պարունակում էր 40% ներմուծող, 30%՝ առևտրային գործունեություն իրականացնող, 20%՝ արտահանող և 20%՝ արտադրող ընկերություններ: Դրա արդյունքում բացահայտվել են ֆինանսական հասանելիության բարդությունները, իրավական դաշտի նկատմամբ վերաբերմունքը և արտահանող/ներմուծող կազմակերպությունների համար առկա հիմնական խոչընդոտները Հայաստանում:

Այսպիսով, ընդհանրացնելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունը՝ փաստենք, որ Հայաստանը մշտապես ուշադրություն պետք է դարձնի արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը և դրա միտումներին: Հատկապես արդի քաղաքական իրադրության պայմաններում, որին ներհատուկ են տնտեսության վայրկյալներում, տնտեսության զարգացումը արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքներին զարկ տալու միջոցով կրում է հրատապ բնույթ, ինչն էլ պայմանավորում է հետագա առաջմղման ուղիների և ինդեքսների մշակման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարելավման գերակայությունները»** վերտառությամբ գլխում կատարված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատում նոր մշակված AIP ինդեքսով և գնահատված է ՀՀ-ի դիրքը միջազգային ասպարեզում ըստ տվյալ ինդեքսի, ինչի հիմքով էլ առաջ են քաշվել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտ ուղիներ:

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման հիմքում դրել ենք GEI համաշխարհային ինդեքսում ներկայացված ինդիկատորները: 2019թ-ին Հայաստանն այս ինդեքսում զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը (2020թ-ին՝ 88-րդ հորիզոնական):

GEI համաշխարհային ինդեքսում ներկայացված մեկնարկի հմտություններ, ռիսկայնություն, մրցակցություն, միջազգայնացում, ռիսկ-կապիտալ ինդիկատորներն օգտագործել ենք AIP; (Assessment of the industrial infrastructural provision, այսուհետ՝ AIPi) ինդեքսի հաշվարկման հիմքում, իսկ նեթվորքինգ, շուկա մուտք գործելու հնարավորություններ, տեխնոլոգիական կլանում, մարդկային ռեսուրսներ, գործընթացային նորարարություն ինդիկատորները՝ AIP_{ni}; (Assessment of the non-industrial infrastructural provision, այսուհետ՝ AIP_{ni}) ինդեքսի հաշվարկման հիմքում:

Հիմք ընդունելով կատարված եզրակահանգումները՝ մշակել ենք ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), որի միջոցով գնահատելու ենք Հայաստանի դիրքն՝ որպես ելակետային տվյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index (Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս)) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

Հիմք ընդունելով ձեռնարկատիրական գործունեության գնահատման ընդհանրական ինդեքսները, մասնավորապես ձեռնարկատիրական հարաբերություններ, հնարավորություններ և ձգտումներ, մշակել ենք նաև ընդհանուր

ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածությունը և ներկայացրել այն ընդհանրական AIP_g ինդեքսի միջոցով, քանի որ վերջինս վերը կատարված ուսումնասիրությունների ընդհանրական պատկերն է:

AIP_i և AIP_{n-i} ինդեքսներում Հայաստանի դիրքի հաշվարկման և համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով ընտրել ենք 3 խումբ երկրներ՝ յուրաքանչյուր խմբում 12-ական երկիր՝ ընտրանքի հուսալիությունը պայմանավորելով 8-12 տարրերից բաղկացած ընտրանքն առավել օպտիմալ համարելու հանգամանքով:

Գնահատման միջակայքը սահմանել ենք [0;1]:

Աղյուսակ 6. AIP ինդեքսի գնահատման միջակայքը

Գնահատման միջակայքը	Մեկնաբանությունը
0 - 0.35	Երկրները տվյալ ինդիկատորների գծով ունեն ոչ բարենպաստ դիրք
0.36 - 0.8	Երկրներն ունեն միջին դիրք
0.81 - 1	Երկրներում ձեռնարկատիրական գործունեությունն ապահովված է և ստեղծված են զարգացման բոլոր նախադրյալները

Այժմ ներկայացնենք հաշվարկների կատարման մեթոդաբանական մոտեցումները: Երկրների դիրքերի հաշվարկման համար ընտրել ենք դիֆերենցիալ մեթոդը, որն իրենից ներկայացնում է գնահատվող օբյեկտի միասեռ (մեր ուսումնասիրության շրջանակներում այն նշանակում է, որ ուսումնասիրվող բոլոր ինդեքսները վերաբերում են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովմանը) պարամետրերի համադրման մեթոդ, ինչի արդյունքում ստանում ենք պարամետրիկ ինդեքս՝

$$J_{G_i} = \frac{G_i}{G_{i3}} * 100 (1.),$$

որտեղ $i=1, \dots, n$; G_i –ը i -րդ գնահատվող պարամետրն է, իսկ G_{i3} -ը՝ ձեռնարկատիրական գործունեության ապահովվածության գնահատման i -րդ պարամետրի «էտալոնային» արժեքն է, որպիսին մենք ընտրել ենք ուսումնասիրվող ինդեքսում ներառված երկրների ռանգավորման միջին թվաբանականը. այն կազմել է 137:

AIP_i և AIP_{n-i} ինդեքսների պարամետրիկ ինդեքսները որոշելուց հետո պետք է որոշենք AIP_i և AIP_{n-i} ինդեքսները, ինչի համար նպատակահարմար է կիրառել կոմպլեքս-համակարգային մեթոդը՝

$$x_{ij} = \frac{a_1 + a_2 + \dots + a_n}{\max_{ij}} (2.)$$

որտեղ a -ն արդեն իսկ որոշված պարամետրիկ ինդեքսներն են, \max_{ij} ՝ AIP_i և AIP_{n-i} ինդեքսներում ներառված երկրների ռանգավորման առավելագույն ցուցանիշն է:

Կատարելով Հայաստանի համար կատարված հաշվարկները՝ ստացել ենք հետևյալ պատկերը.

**Աղյուսակ 7. Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության
ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակն՝ ըստ AIP ինդեքսի**

<i>Պարամետրիկ ինդեքսի անվանումը</i>	<i>Արդյունքը</i>
AIP₁ ինդեքս	0,650
Մեկնարկի հմտություններ	0,225
Ռիսկայնություն	0,043
Մրցակցություն	0,177
Միջազգայնացում	0,200
Ռիսկ-կապիտալ	0,086
AIP_{n-i} ինդեքս	0,493
Նեթվորքինգ	0,180
Շուկա մուտք գործելու հնար.	0,143
Տեխնոլոգիական կյանում	0,215
Մարդկային ռեսուրսներ	0,433
Գործընթացային նորարարություն	0,097
AIP_e ինդեքս	0,8
Ձեռնարկատիրական հարաբերություններ	0,1
Ձեռնարկատիրական հնարավորություններ	0,2
Ձեռնարկատիրական ձգտումներ	0,2

Ստացված արդյունքների սխալի հավանականությունը գնահատելու համար կիրառելով վարկածի ստուգման Պիրսոնի բանաձևը՝ ստացել ենք հետևյալ պատկերը. արդյունքը՝ 0,000021-ը փոքր է թույլատրելի α -ից, ինչը վկայում է այն մասին, որ վարկածն ընդունելի է, իսկ մշակված ինդեքսով ստացված արդյունքը՝ հավաստի:

Այսպիսով, վերը կատարված բոլոր հաշվարկների արդյունքներով Հայաստանն ունի միջին դիրք ուսումնասիրված երկրների շարքում: Միջին դիրքում գտնվելը պայմանավորված է աշխատանքի երկրորդ գլխում բացահայտված մի շարք խոչընդոտներով, որոնք ծառանում են ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի առջև: Այդ խնդիրների վերացումը, կարծում ենք, հնարավոր է բացահայտված խնդիրներն ըստ չափման ինդիկատորների կարգավորելու դեպքում:

Այժմ ներկայացնենք ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման մեր կողմից առաջարկվող հիմնական ուղիները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- Բանկերում և վարկային կազմակերպություններում մոնիթորինգի համակարգի ներդրում
- Բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային մասնագետների վերապատրաստում և որակավորման բարձրացում
- Կորպորատիվ հաճախորդների պետական աջակցության արդյունավետության բարձրացում
- ՀՀ ԿԲ-ի կողմից վարկանշող հանձնաժողովի կողմից վարկանշվող ձեռնարկությունների ցանկը

Գծապատկեր 4. Ֆինանսական ռեսուրսների հասանելիության մակարդակի բարձրացման հիմնական ուղիները

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

- Ենթակառուցվածքային կառավարում համապատասխան պետական մարմնի կողմից
- Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի բարելավում
- Ներկրվող ապրանքների դեպքում երկրի ներսում դրանց վաճառքի իրականացումն Օ-ական ԱԱՀ-ով
- Հարկային ռեգիստրների ստեղծում
- Կոռուպցիայի դեմ պայքարի պետական մարմնի ստեղծում

Գծապատկեր 5. Օրենսդրական կարգավորման հիմնական ուղիները

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Արդար և հավասար սկզբունքներով հարկային վարչարարության իրականացում
- Հարկային և ֆինանսական հաշվառումների միջև առկա տարբերությունների վերացում
- Պարտադիրության սկզբունքով կազմակերպությունների ներսում հարկային պլանավորման համակարգի ներդրում

Գծապատկեր 6. Հարկային համակարգի բարելավման հիմնական ուղիները

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Հետբացթողումային հսկողության նվազագույնի կիրառում
- Մաքսագերծման գործընթացների կազմակերպում մեկ պատուհանի սկզբունքով
- Մաքսագերծման հետ կապված բոլոր վճարների հանրագումարի հետաձգված վճարման համակարգի ներդրում

Գծապատկեր 7. Մաքսային համակարգի բարելավման հիմնական ուղիները

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Ներդրումների արդարացվածության բարձրացում
- Ձեռնարկատիրական գործունեության շուրջ առաջացող վեճերի քննում առանձին մասնագիտացված խորհուրդների կազմման միջոցով
- Դատական համակարգի հանդեպ վստահության աստիճանի բարձրացում

Գծապատկեր 8. Դատաիրավական համակարգի բարելավման հիմնական ուղիները

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են հիմնական եզրակացությունները և կատարված առաջարկությունները: Դրանցից հիմնականներն են.

1. Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ ենթակառուցվածքները տարածաշրջանը, երկիրը կամ մարզը սպասարկող համակարգեր են, որոնք անհրաժեշտ են տնտեսության լիարժեք և արդյունավետ գործառնման համար: «Ենթակառուցվածք» եզրույթի մեջ տարանջատվում են տեխնիկական համակարգերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ճանապարհները, կամուրջները, երկաթգծերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, էլեկտրահամակարգերը, օդանավակայանները և այլն:

2. Ձեռնարկատիրական ենթակառուցվածքը միմյանց հետ փոխգործառնող ձեռնարկատիրական կառուցվածքների, տնտեսվարող սուբյեկտների,

ձեռնարկատիրական ենթակառուցվածքների բնականոն գործունեությունն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների և պետական ինստիտուտների ամբողջություն է:

3. Մասնագիտական գրականության ուսումնասիրության հիմքով եզրահանգում ենք, որ ձեռնարկատիրական ենթակառուցվածքը որպես տնտեսական համակարգի բաղադրատարր վերարտադրության գործընթացի հիմք է: Առևտրի և արդյունաբերության զարգացումը ենթադրում է ֆիզիկական ենթակառուցվածքի՝ ճանապարհային և երկաթուղային ցանցի, տրանսպորտի առկայություն: Ըստ այդմ ենթակառուցվածքը ձեռնարկատիրության կամ հասարակության գործառնման ֆիզիկական ասպեկտ է՝ այսինքն ունի ֆիզիկական սուբստանցիա և նպաստում է նշվածների բնականոն գործառնմանը:

4. Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածությունը ձեռնարկատիրության ենթակառուցվածքի սուբյեկտների կողմից ենթակառուցվածքային գործիքների կիրառմամբ և ենթակառուցվածքային գործունեության տեսակների կազմակերպմամբ ենթակառուցվածքային համակարգի զարգացման գործընթաց է:

5. Ձեռնարկատիրական գործունեության որևէ տեսակի ենթակառուցվածքային ապահովվածությունը ձևավորվում է տվյալ ապրանքի (ծառայության, աշխատանքի) շուկայի ենթակառուցվածքի տեսքով ենթակառուցվածքային բազաների ձևավորման ճանապարհով՝ որպես ձեռնարկատիրության ներսում ենթակառուցվածքային տարրերի ընտրության և արտաքին ենթակառուցվածքի տարրերի հետ դրանց փոխգործակցության արդյունք:

6. Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության արդյունքում՝

- կանոնակարգվում և արագանում է առևտրաշրջանառությունը, ապահովվում է գործարար հարաբերությունների կազմակերպարարական ձևավորում,

- ապահովվում է շուկայական հարաբերությունների մասնակիցների մասնագիտացում՝ արտադրող, միջնորդ, գնորդ,

- ապահովվում է ձեռնարկատիրական գործունեության գծով պետական կարգավորման գործառույթի կենսագործում, հնարավորություն է ընձեռնվում բալանսավորել մակրո և միկրոմիջավայրերը, ապահովել ձեռնարկությունների կապիտալի և ընդհանուր կապիտալի փոխկապակցվածություն,

- ապահովվում է իրավական վերահսկողություն ֆինանսական հոսքերի նկատմամբ,

- ապահովվում է տեղեկատվական, մարքեթինգային, ինովացիոն, քոնսալթինգային, աուդիտորական և այլ ծառայությունների մատուցում ձեռնարկատիրական գործունեության զարգացման և արդյունավետ գործառնման նպատակով:

7. Ուսումնասիրության արդյունքներով պարզվեց, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքների զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ գործոններ: Հարկային օրենսդրությունը բավականին խրթին է, ապահովված չէ մատչելիությունը և հստակությունը, ինչի արդյունքում այն հասկանալի չէ հասարակության բոլոր անդամների համար և հասարակության առանձին շերտերի կողմից հաճախ ուշադրություն չեն դարձվում հարկային օրենսգրքում այն մոտեցումների

վրա, որոնք, մեր կարծիքով, կարող են զգալիորեն բարձրացնել հարկային բեռը, բացասական ազդեցություն ունենալ ինչպես բնակչության սոցիալական վիճակի, գնաճային ճնշումների, այնպես էլ գործարար միջավայրի վրա: Օրենսգրքում կան մի քանի խնդրահարույց դրույթներ, որոնք հիմնականում ծանրացնելու են փոքր և միջին բիզնեսի հարկային բեռը: Մինչդեռ կառավարությունը, որը խնդիր է դրել պետական բյուջեում հարկային մուտքերն ավելացնել, պետք է ուժեղը խոշոր բիզնեսի վրա կենտրոնացնի, որը ավելի շատ հարկային մուտքեր կարող է ապահովել:

8. Հայաստանը մշտապես ուշադրություն պետք է դարձնի արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը և դրա միտումներին: Հատկապես արդի քաղաքական իրադրության պայմաններում, որին ներհատուկ են տնտեսության վայրկյալերումները, տնտեսության զարգացումը արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքներին զարկ տալու միջոցով կրում է հրատապ բնույթ, ինչն էլ պայմանավորում է հետագա առաջմղման ուղիների և ինդեքսների մշակման անհրաժեշտությունը:

9. Միջազգային չափումների հիմքով աշխատանքում մշակվել և տեղայնացվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության ինդեքս: Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսի որոշման համար ընտրել ենք մեկնարկի հմտություններ, դիսկայնություն, նեթվորքինգ, շուկա մուտք գործելու հնարավորություններ, տեխնոլոգիական կլանում, մարդկային ռեսուրսներ, մրցակցություն, գործընթացային նորարարություն, միջազգայնացում, դիսկ-կապիտալ ինդիկատորները, որոնց հիմքով մշակել ենք ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision), որի միջոցով գնահատել ենք Հայաստանի դիրքն՝ որպես երկրատային տվյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index (Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս)) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

10. Կարծում ենք, որ տնտեսության կայուն զարգացման, միջազգային չափումներում և մեր կողմից մշակված ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավման անհրաժեշտ պայման է ձեռնարկատիրական գործունեության ապահովվածության պետական աջակցումը: Տնտեսության ձեռնարկատիրական հատվածի զարգացման կայուն տեմպերի ապահովումը հնարավոր է միայն վերջինիս ապահովվածության պայմաններում, ինչը, սակայն, չպետք է հանգեցնի որակական հատկանիշների անկման:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Վարդանյան Ա. Է. «ՓՄՁ ենթակառուցվածքի ոլորտի դերը ՀՀ ազգային տնտեսությունում»: «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածու»: 2017թ.: էջ 185-193:

2. Վարդանյան Ա. Է. «Ձեռնարկատիրական ռիսկի հասկացությունը, ձեռնարկատիրական ռիսկի աստիճանի նվազման մեթոդները»: «Այլընտրանք» գիտական հանդես: 2017թ. #3 հուլիս-սեպտեմբեր: էջ 158-167:

3. Վարդանյան Ա. Է. «Ձեռնարկատիրական գործունեության և դրա ենթակառուցվածքների կայացումը ՀՀ-ում. վիճակագրություն»: «Այլընտրանք» գիտական հանդես: 2017թ. #4 հոկտեմբեր-դեկտեմբեր: էջ 356-365:

4. Վարդանյան Ա. Է. «Ձեռնարկատիրական գործունեության քաղաքակրթական էվոլյուցիան և դասակարգման չափանիշները»: «Ֆինանսներ և էկոնոմիկա» 5-6 (201-202) 2017: էջ 75-82:

5. Վարդանյան Ա. Է. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածք»: «Ֆինանսներ և էկոնոմիկա» 11-12 (207-208) 2017: էջ 51-55:

6. Վարդանյան Ա. Է. «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման հիմնական տեսամեթոդական մոտեցումները և ՀՀ դիրքը համաշխարհային զեկույցներում»: «Տարածաշրջան և աշխարհ» հանդես հատոր X, № 1, 2019: էջ 79-87:

7. Վարդանյան Ա. Է. «ՀՀ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության արդի վիճակի և արդյունավետության վերլուծությունը և գնահատումը»: «Տարածաշրջան և աշխարհ» հանդես հատոր X, № 1, 2019: էջ 88-98:

8. Վարդանյան Ա. Է. «Ձեռնարկատիրական գործունեության արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության գնահատումն AIP ինդեքսով և բարելավման գերակայությունները»: «Տարածաշրջան և աշխարհ» հանդես հատոր X, № 3, 2019: էջ 135-143:

9. Вardanyan A. Э. „Позиция Армении в Индексе AIP для оценки обеспечения инфраструктуры предпринимательской деятельности: проблемы и возможности“. „Научные мысли“ ежеквартальный научно-методический журнал №1 (31). Т.7. 2019, стр. 91-96.

10. Վարդանյան Ա. Է. «ՀՀ ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության արդի վիճակի և արդյունավետության վերլուծությունը և գնահատումը»: «Հայ-Ռուսական համալսարանի լրաբեր (հումանիտար և հասարակական գիտություններ)» №3/2018: էջ 135-143:

11. Vardanyan A. “The infrastructural provision of entrepreneurial activities”. “BULLETIN of Armenian National Agricultural University” 2019 №1/65. p. 20-23.

ОЦЕНКА И ПУТИ УЛУЧШЕНИЯ УРОВНЯ ИНФРАСТРУКТУРНОГО
ОБЕСПЕЧЕНИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

**Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук
по специальности 08.00.05 - Экономика, управление хозяйством и его
сферами.**

*Защита диссертации состоится 16-ого сентября 2021 года, в 14:00 часов
на заседании специализированного совета 014 ВАК Республики РА по
экономике при Армянском Государственном Университете Экономики
(0025, РА, г. Ереван, М. Налбандян 128)*

РЕЗЮМЕ

Основной целью исследования является изучение уровня инфраструктурного обеспечения предпринимательской деятельности в РА, выявление существующих проблем, на основе международного опыта обработка такого индекса, с помощью которого будут оценены как общий уровень инфраструктурного обеспечения предпринимательской деятельности, так и уровни обеспеченности промышленных и не промышленных инфраструктур, в итоге будут обработаны научно-практические пути развития и поднятия уровня инфраструктурного обеспечения предпринимательской деятельности в РА.

Для достижения цели исследования были поставлены и решены следующие задачи:

- исследовать сущность инфраструктурного обеспечения предпринимательской деятельности и представить его основные составные,
- изучить теоретические и методологические подходы оценивания инфраструктурного обеспечения предпринимательской деятельности,
- изучить международный опыт оценивания инфраструктурного обеспечения предпринимательской деятельности,
- проанализировать особенности и уровень инфраструктурного обеспечения предпринимательской деятельности в РА,
- выявить сегодняшнее состояние промышленных и не промышленных инфраструктур в РА,

- изучив используемые международные индексы, обработать индекс оценивания инфраструктурного обеспечения предпринимательской деятельности AIP,
- провести опрос для выявления преград для предпринимательской деятельности в РА,
- предложить пути повышения уровня инфраструктурного обеспечения предпринимательской деятельности.

В ходе исследования был получен ряд результатов, следующие из которых содержат научную новизну:

- В ходе совершенных исследований были по новому предложены определения для понятий „предпринимательская инфраструктура” и „инфраструктурное обеспечение предпринимательской деятельности”, а также, учитывая функциональные подсистемы предпринимательских инфраструктур и составные, которые имеют наиболее большой удельный вес в них, была предложена новая классификация предпринимательских инфраструктур и новая система оценивания продуктивности процессов развития инфраструктурного обеспечения предпринимательской деятельности.

- Выявлен уровень инфраструктурного обеспечения предпринимательской деятельности в РА, и, учитывая место Армении в международных измерениях, исследования состояния промышленных и не промышленных инфраструктур, оценки их продуктивности и результаты проведенного опроса, предложен индекс оценивания инфраструктурного обеспечения предпринимательской деятельности AIP (Assessment of the infrastructural provision), который даст возможность оценить как уровень обеспеченности общего, так и промышленных и не промышленных инфраструктур.

- На основе всех проведенных исследований были предложены пути поднятия уровня инфраструктурного обеспечения предпринимательской деятельности.

Диссертация представляет собой исследование экономики и инфраструктурного обеспечения предпринимательской деятельности страны, практическая ценность которой обусловлена необходимостью развития этих систем и решения социально-экономических проблем, а с теоретической точки зрения, это попытка продвижения преимуществ развития инфраструктурного обеспечения предпринимательской деятельности путем проведенных исследований.

Результаты исследований могут быть использованы в процессе развития инфраструктурного обеспечения предпринимательской деятельности, в особенности государственными и частными заинтересованными сторонами, заинтересованными в развитии инфраструктурного обеспечения предпринимательской деятельности, а также специалистами, занимающимися этой проблемой.

**ASSESSMENT AND THE WAYS TO IMPROVE THE LEVEL OF THE
INFRASTRUCTURAL PROVISION OF ENTREPRENEURIAL ACTIVITIES IN RA**

**Dissertation for Ph.D. in Economics on the specialization of 08.00.05 -
Economics, management of economy and its spheres**

*The defense of the thesis will take place on 16th of september 2021 at 14:00 o'clock
at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of
Economics (0025, 128 M.Nalbandyan str., Yerevan, RA)*

ABSTRACT

The main goal of the thesis is to study the level of the infrastructural provision of entrepreneurial activities in Armenia, to identify existing problems, on the basis of international experience, to process an index, which will be used to assess both the general level of infrastructural provision of entrepreneurial activities and also for the industrial and non-industrial infrastructures, as a result, scientific and practical ways of development and raising the level of infrastructural provision of entrepreneurial activities will be processed in RA.

To achieve the goal of the study, the following tasks were set and solved:

- explore the essence of the infrastructural provision of entrepreneurial activities and present its main components,
- to study the theoretical and methodological approaches of assessing the infrastructural provision of entrepreneurial activities,
- to study the international experience of assessing the infrastructural provision of entrepreneurial activities,
- analyze the features and level of the infrastructural provision of entrepreneurial activities in the Republic of Armenia,
- identify the current state of industrial and non-industrial infrastructures in Armenia,
- having studied international indexes, propose the index of assessing the infrastructural provision of entrepreneurial activities (AIP),
- conduct a survey to identify barriers of the entrepreneurship in Armenia,
- propose ways to improve the level of infrastructure support for entrepreneurship.

During the study, a number of results were obtained, the following of which contain a scientific novelty:

- In the course of advanced studies, definitions for the concepts of “entrepreneurial infrastructure” and “infrastructural provision of entrepreneurial activities” were proposed in a new way, and also, taking into account the functional subsystems of entrepreneurial infrastructures and components that have the largest share in them, a new classification of entrepreneurial infrastructures and a new system for evaluating the productivity of the development of infrastructure support for the entrepreneur activity were proposed.

- The level of infrastructure support for entrepreneurship in the Republic of Armenia was identified, and, taking into account Armenia’s place in international indexes, studies of the state of industrial and non-industrial infrastructures, assessment of their productivity and the results of the survey, an index of assessment of the infrastructural provision of entrepreneurial activities was proposed, which will provide an opportunity to assess both the level of general, and industrial and non-industrial infrastructures.

- On the basis of all the studies that were carried out, ways were suggested to raise the level of the infrastructural provision of entrepreneurial activities.

The thesis is a study of the economy and infrastructure support for the country's entrepreneurial activity, the practical value of which is due to the need to develop these systems and solve socio-economic problems, and from a theoretical point of view, it is an attempt to promote the benefits of developing the infrastructure support of the entrepreneur through research.